

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնների համար

1. Ընտանեկան բժիշկ -1,0
2. Բժիշկ-սոնոգրաֆիստ -0,5
3. Ընտանեկան բուժքույր -1,5
4. Դպրոցի բուժքույր - 1,0

ՀՀ կառավարության 2011թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պայմաններին՝

-բարձրագույն (միջին մասնագիտական) բժշկական և հետդիպլոմային կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ;

- վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն, եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան հինգ տարի;

- բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1. դիմում (լրացվում է տեղում)
2. մեկ լուսանկար 3 x 4 չափի
3. քաղվածք աշխատանքային գրքույկից
4. ինքնակենսագրություն

5. անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ուժ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ՝ ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները

6. արական սեռի անձինք՝ նաև զինգրույթի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը

7. նախորդ աշխատավայրից բնութագիր (եթե այդպիսին առկա է)

8.օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետության կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կձանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Փաստաթղթերը ընդունվում են «Քասախի Առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ում ամեն օր ժամը 10.00 – 15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից (ՀՀ Կոտայքի մարզ,գ.Քասախ ,Ռ.Սաֆարյան 1/10, հեռախոս 0224-6-32-98): Դիմումների ընդունման վերջնաժամկետը 19.03.2019թ.

Մրցույթը տեղի կունենա «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.03.2019թ. ժամը 14.00-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել«Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: